«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 5-Ի ԹԻՎ 10 ՆԻՍՏԻ

ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 1407-Ն որոշմամբ հաստատված «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) կանոնադրության 55-րդ կետով՝

Գիտական խորհուրդը որոշում է.

1. Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Լ.Ավետիսյանի՝ Համալսարանի 2025-2026 թվականների ուսումնական աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը գնահատել բավարար (զեկույցը կցվում է) (26-11-10-01):

2. Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին.

1) ելնելով հավատարմագրումների գործընթացի արդյունքներից՝ մշակել և մինչև 2026թ. դեկտեմբերի 25-ը համալսարանի Գիտական խորհրդի նախագահին ներկայացնել կրթական ծրագրերի գնահատման առանցքային ցուցանիշները՝ հաջորդ 5 տարիների կտրվածքով (26-11-10-02).

2) մեկ տարվա ընթացքում, ելնելով «Բարձրագույն կրթության և գիտության մասին» նոր օրենքից, վերամշակել, մշակել և հաստատման ներկայացնել ուսումնական գործընթացը կանոնակարգող կարգերն ու ընթացակարգերը (26-11-10-03):

3. Հանձնարարել առարկայական մեթոդական հանձնաժողովների նախագահներին՝ 2026-2027թթ. Հանձնաժողովների նիստերի օրակարգերում քննարկել՝

1) մոդուլային ուսուցման շրջանակներում ուղղահայաց, հորիզոնական և պարուրաձև ինտեգրման բարելավմանն ուղղված խնդիրները՝ ապահովելու համար տեսական և կլինիկական մոդուլների փոխհամաձայնեցված աշխատանքները (26-11-10-04).

2) գիտելիքների գնահատման ստորին շեմի՝ նախ 60, ապա 70 տոկոս սահմանելու ճանապարհային քարտեզը և գործիքները (26-11-10-05).

3) մոդուլներում ընդգրկված բաղադրիչներից միասնական թեստեր կազմելու անհրաժեշտությունը, և առաջարկել նման թեստերի կազմման և գնահատման նոր մոտեցումներ (26-11-10-06).

4) կրեդիտային համակարգում գործնական հմտությունների համամասնության ավելացման, դրանց ուսուցման և գնահատման մեթոդաբանության բարելավման հարցերը (26-11-10-07).

5) բարձր կուրսերում որևէ էլեկտիվ առարկա անգլերեն լեզվով դասավանդելու հնարավորության հարցը (26-11-10-08):

4. Հանձնարարել կրթական ծրագրերի ղեկավարներին՝ մինչև 2026-2027 ուստարվա մարտ ամիսը Ուսումնամեթոդական խորհրդի քննարկմանը ներկայացնել ուսումնական պլաններում էլեկտիվ առարկաների ցանկի, դասավանդման և գնահատման մեթոդների վերաբերյալ անհրաժեշտ փոփոխությունները (26-11-10-09):

5. Հանձնարարել միջազգային աշխատանքների գծով պրոռեկտորին՝ ինտենսիվացնել «Ստոմատոլոգիա» և «Ֆարմացիա» կրթական ծրագրերում արտասահմանցի ուսանողների ներգրավվածության ավելացման ուղղությամբ աշխատանքները (26-11-10-10):

6. Հանձնարարել Կրթության որակի ապահովման և գնահատման կենտրոնի ղեկավարին՝ մինչև 2026-2027 ուստարվա ավարտը՝

1) վերամշակել «ԴՈՒԱ» հարցման հարցաշարը՝ մոդուլային սկզբունքի հաշվառմամբ (26-11-10-11).

2) մշակել դասախոսությունների գնահատման ցուցիչներ (26-11-10-12):

7. ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, բիոքիմիայի ամբիոնի բազմամյա ղեկավար, կ.գ.դ., պրոֆ. երջանկահիշատակ Մ.Աղաջանովի բիոքիմիայի ամբիոնում գտնվող իր աշխատասենյակը անվանակոչել՝ «Միխայիլ Աղաջանովի անվան լսարան» (26-11-10-13):

8. Հիմք ընդունելով քվեարկության արդյունքները և հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը, Ռազմադաշտային թերապիայի ամբիոնի ավագ դասախոս Անի Քոչարյանին երաշխավորել «Դոցենտի» գիտական կոչման շնորհման: Սույն որոշումը սահմանված կարգով ներկայացնել ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտե՝ կցելով անհրաժեշտ փաստաթղթերը (կցվում են) (26-11-10-14):

9. Որոշումների կատարման հսկողությունը հանձնարարել ռեկտոր, պրոֆեսոր Ա.Ա.Մուրադյանին:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ա.Ա.ՄՈՒՐԱԴՅԱՆ**

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Տ.Գ.ԱՎԱԳՅԱՆ**